

+18



«...ես միշտ ձեզ հես եմ, ձեր մեջ եմ...».

ընտրել լեզու հայերեն



Մուտք

Գրանցում



«... Այս ժողովուրդը, որ ապրած է հարիւր հազար Գողգոթաներ հարիւր հազար Ցիսուներու, այս ժողովուրդը ապրած չէ երբեք ներքին, բարոյական Գողգոթա մը...»:

Կոստան Զարյան



ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՄԵԴԻԱՀԱՐԹԱԿ




5 °C

Armenia
Yerevan
04.03.2023
08:00



ԽՐԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՑԱՍ ԱՆԻՍԱՐԿ ԿՐԹԱԿԱՆ ՄԵԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ



Ազգագրություն Ամփտանգություն Ստողջապահություն Աստվածաբանություն Առևտուր
Ապագայագիտություն Ապահովագրություն Արժեքներ Արձակ Արվեստ Բիզնես կառավարում



«ՀԱՅԵՐ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՄԵԴԻԱՀԱՐԹԱԿԸ ՍՏԵՂԾՎԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ԴՐԱՄԱՀԱՎԱԶՈՎ

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ՄԵՐ ԱԶԱԿԻՑՆԵՐԸ

ԴԱՐՁԻՐ ՆԱԽԱԳԾԻ ԱՂԱՄ



ԶՐՈՒՅՑ 10.02.2023 | 05:45

«Աշխատասիրությունը նույնպես տաղանդ է...». ՈՌԻԲԵՆ ԿՈՍՏԵՄՅԱՆ

https://thearmenians.am/hy



Լիլիթ Ակոբյանյան

ՀՐՈՒՅՑ 10.02.2023 | 05:45 | 127

«Աշխատասիրությունը նույնպես տաղանդ է...». ՌՈՒԲԵՆ ԿՈՍԵՄՅԱՆ



Վերջերս Հայաստանում է կանադահայ հանրահայտ ջութակահար - մենակատար Ռուբեն Կոստյանը: Նրա հետ ծանոթացա Երևանում ցուցահանդեսներից մեկի ժամանակ, որին մասնակցում էի նաև ես: Ջրուցեցինք երաժշտությունից, նկարչությունից, արվեստում ունեցած նախասիրություններից և ընկալումներից: Նաև՝ միմյանց ստեղծագործական ծրագրերից ու անելիքներից... Պարզվեց, որ Հայաստանում ունեցած համերգների շարքից հետո ջութակահարը նախաձեռնել է ձայնագրությունների և փոխադրությունների բազմաժանր ու լայնածավալ մի ծրագիր: Այդ թեմայի շուրջ էլ ավելի մանրամասն զրուցել եմ նրա հետ:

- Ռուբեն, արդեն երկար ժամանակ է՝ զբաղվում եք ձայնագրություններով ու փոխադրություններով: Ասացիք, որ ձայնագրել եք 191 գործ և փոխադրել տարբեր ժամանակաշրջանի 95 ստեղծագործություն: Երբ և ինչպես ծագեց այդ մտահղացումը և երբ սկիզբ դրվեց այս գործընթացին:

- Ձայնագրություններ անելու ցանկություն միշտ եմ ունեցել, քանի որ համոզված եմ եղել, որ կարող եմ շատ գործեր կատարել: Դեռևս Հայաստանում ապրելուս ընթացքում սկսեցի ձայնագրվել: Նաև որոշ փոխադրություններ ունեի արված: Սակայն նպատակային ու լայնածավալ՝ որպես առաջիկա տարիների համար նախատեսված ծրագիր, այո, մեկ-երկու տարի է, ինչ սկսել եմ:

Ձայնագրությունը յուրահատուկ գործընթաց է՝ համապատասխան մոտեցում պահանջող: Դրա դժվարությունն այն է, որ ձայնագրության համար կարևոր է ոչ միայն կատարողական տեխնիկական կողմը, որը պետք է կատարյալ լինի, այլև զգացողությունը, երաժշտությունը, հեղինակի միտքը ճշտությամբ փոխանցելը, ինչի պատճառով էլ գործը հետաքրքիր է լսելը:

Ձայնագրությունների պրակտիկան դեռ մանկուց կա. ձայնագրվել եմ փոքր տարիքից: Պահպանվել են 8-9 տարեկան ժամանակվա իմ համերգային ձայնագրությունները: Կարող եմ ասել, որ ձայնագրությունը դժվար և աշխատատար գործընթաց է:

- Ինչը պատճառ եղավ, որ սկսեցիք փոխադրություններ անել:

- Հայաստանում, ինչպես նաև Կանադայում, շփումներս կոմպոզիտորների հետ բավականին հաճախ ու երկարատև են եղել: Նրանցից սովորեցի կոմպոզիցիայի, ստեղծագործության կառուցման ձևն ու կանոնները:

Կանադայում ապրելու տարիներին համերգային գործունեությանս ընթացքում աշխարհի

տարբեր բեմերում նվագել եւ ջութակի ռեպերտուարի մեծ մասը, որոնց մի մասն էլ այդ ընթացքում ձայնագրվել է: Ժամանակի հետ ավելի սուր զգացի, որ միայն ջութակի համար գրված գործերի կատարումն ինձ չի բավարարում: Ջութակի ռեպերտուարից բացի՝ շատ եւ լսել այլ գործեր ևս, որոնք ինձ չափազանց դուր են եկել և միշտ էլ մեծ ցանկություն եմ ունեցել դրանք նվագելու: Որոշեցի փոխադրել դրանք: Հույս ունեի, որ այդպիսով նաև նոր ռեպերտուար կստեղծվի՝ փոխադրություններ ջութակի և դաշնամուրի համար, որոնք կարող էին մյուսներն էլ կատարել:

Գիտենք, որ ժամանակին փոխադրություններ են արել այնպիսի մեծ ջութակահարներ, ինչպիսիք են Ֆրից Կրեյսլերն ու Յաշա Հեյֆեցը: Սկսեցի ավելի խորն ուսումնասիրել փոխադրությունների նրբությունները: Վաշինգտոնի գրադարանը հնարավորություն ունեւեց արխիվային ձեռագիր նոտաներին ծանոթանալու: Գտա Մերգել Ռախմանինովի՝ մի շարք փոխադրությունների իր աշխատած օրինակները, հայտնաբերեցի նաև Յաշա Հեյֆեցի փոխադրած շատ անհայտ գործեր, որոնք չեն տպագրվել կամ, եթե տպագրվել են, ապա չեն տարածվել: Ծանոթացա Հեյֆեցի աշակերտների հետ: Կապ հաստատեցի նաև նրա որդու հետ, ով ինձ օգնեց ձեռք բերել իր հոր աշխատած օրինակները: Համեմատելով դրանք իմ աշխատած տարբերակների հետ, նկատեցի՝ 2-3 գործի փոխադրություն համընկնում են: Փոխադրելու համար մնացած գործերն ընտրել եմ այնպես, որ երբևէ փոխադրված չլինեն՝ խուսափելու համար կրկնություններից:

- Ինչ տիպի գործեր եք փոխադրել:

- Այսօրվա դրությամբ մոտավորապես 90 և ավելի գործի փոխադրություն ունեմ արված՝ ջութակի և դաշնամուրի համար: Օրինակ, Մոդեստ Մուսորգսկու շատ հայտնի «Նկարներ ցուցահանդեսից» գործը դաշնամուրի համար, որը Մորիս Ռավելը փոխադրել է նվագախմբի համար, փոխադրեցի որպես սուիտ (11 պիես) ջութակի և դաշնամուրի համար: Կարծում եմ, շատերը կցանկանան այն կատարել:

Իմ փոխադրած գործերի թվում է նաև Մերգել Ռախմանինովի «Օպ. 39 N 5»-ը, որը նվիրել եմ հորս՝ Հայաստանի վաստակավոր արտիստ, «Կոմիտաս» քառյակի ալտահար Ալեքսանդր Կոսեմյանին:

Կան ջազային ոճի գործերի փոխադրություններ, օրինակ՝ Դյուկ Էլինգտոն և Ջորջ Գերշվին: Էլինգտոնի գործի փոխադրությունն առայժմ հրատարակելու իրավունք չունեմ, քանի որ հեղինակային իրավունքի ժամկետը չի լրացել: Մակայն տպագրության պայմանագիրն արդեն կա: Հանրահայտ ֆիրմաներից մեկի հետ մնացած 70 գործերը միանգամից տպագրելու բանակցություններն ընթացքի մեջ են, և որոշ հարցերի շուրջ արդեն պայմանավորվածություն կա:

- Փոխադրություններն արդյո՞ք ավելի ստեղծագործական ունակություններ չեն պահանջում: Ինչպե՞ս է հաջողվում համատեղել կատարողական և ստեղծագործական գործընթացները:

- Կատարումն էլ է պահանջում ստեղծագործելու ունակություն, պարզապես կատարողը մի փոքր ավելի սահմանափակված է գրված տեքստով:

Փոխադրության համար նախ և առաջ անհրաժեշտ է ճիշտ վերլուծել հեղինակային տեքստը՝ վերծանելով այն տարբեր գործիքների համար: Հաջողված փոխադրություն անելու համար պակաս կարևոր չէ նաև համապատասխան գործիքներին տիրապատելը: Ինքս «լսում»՝ պատկերացնում եմ, թե գործն ինչպես կհնչի տվյալ գործիքներով:

Փոխադրություն անելիս՝ փոխադրողն ինչ-որ տեղ համահեղինակ է, նա կարող է իրեն թույլ տալ որոշակի փոփոխություններ անել, այնպիսիք, որոնք չեն խախտում հեղինակի ոճն ու միտքը, ավելին՝ ընդգծում են դրանք:

- Ինչ է հաջորդելու դաշնամուրի և ջութակի դուետների ձայնագրություններին:

- Այս պահին ձայնագրման և փոխադրությունների գործընթացին զուգահեռ նաև բանակցում եմ մի շարք միջազգային հանրահայտ լեյբլների ու հրատարակչական տների հետ՝ ֆիզիկական և թվային տարբերակով սկավառակների թողարկման, ինչպես նաև փոխադրությունների տեքստերի տպագրման հարցերի շուրջ:

Իմ արած փոխադրությունների մի մասն արդեն տպագրվել է. Մանկտ Պետերբուրգում լույս է տեսել երկու ժողովածու, մեկում ընդգրկված են Պ. Չայկովսկու, Ս. Ռախմանինովի, Կոմիտասի, Ֆ. Լիստի գործերը, իսկ մյուսում՝ Ս. Պրոկոֆևի՝ «Ռոմեո և Ջուլիետից» իմ փոխադրած 6 պիեսը, որոնք նախկինում փոխադրված չեն եղել: Կատարողների համար սրանք նոր գործեր են: Թողարկվել է նաև նույն գործերի ձայնագրությամբ սկավառակ՝ դաշնակահար Նատալյա Մազականյանի հետ: Կա նշված ժողովածուն նաև Հայաստանում տպագրելու պայմանավորվածություն:

Ասեմ, որ Պրոկոֆևի թոռն անձամբ է նայել գործերը և շատ գոհ է մնացել: Եվ ջութակի, ն՝ դաշնամուրի պարտիաներն արված են շատ մանրամասն՝ ընդհուպ մինչև նշված մատներ և այլ տեխնիկական նյութաներ:

Պայմանավորվածություններ կան Պ. Չայկովսկու և Վ. Սիլվեստրովի գործերը ձայնագրելու և թողարկելու շուրջ:

Բացի այս ամենից՝ նախատեսում եմ ձայնագրել Յ. Ս. Բախի, Է. Իգայիի, Ն. Պագանինիի ջութակի մենանվագները, ինչպես նաև մոտավորապես 30 խոշոր գործ՝ արտասահմանյան տարբեր նվագախմբերի հետ:

- Մինչ այդ բազմաթիվ համերգներ եք ունեցել տարբեր երկրներում: Ո՞ր հանդիսատեսն է ավելի ջերմ ընդունել, ո՞ր բեմերում եք ավելի լավ զգացել որպես կատարող և ինչո՞ւ:

- Լավ զգալը կապված է դահլիճի հնչողության, դիրիժորի և նվագախմբի կատարողական մակարդակի, ինչպես նաև լավ գործիքի ու աղեղի հետ: Կարևոր է, թե որքանով է հանդիսատեսը մասնակից քո նվագին: Երբ հանդիսատեսը զգայուն է և արձագանքող, կատարողի և նրա միջև ստեղծվում է «երկխոսություն», որն էլ համերգի գլխավոր նպատակն է: Հանդիսատեսի մասնակից լինելը կախված է նաև համերգային այն ծրագրից, որը կազմում ես:

Մեծ ջերմություն զգացել եմ մեքսիկացի հանդիսատեսից: Միացյալ Նահանգներում մեծ ոգևորությամբ հանդիսատեսն ընդունեց հայկական ռեպերտուարը՝ Բաբաջանյան, Բաղդասարյան: Ամեն տեղ հանդիսատեսը տարբեր է, իհարկե: Ամեն տեղ էլ ջերմության որոշակի աստիճան անպայման լինում է:

- Իսկ Հայաստանում:

- Ինձ թվում է՝ Հայաստանում հանդիսատեսն ավելի սառն է, ավելի հակված է քննադատության, քան երաժշտությունից հաճույք ստանալուն: Բարեհաճ ու կամեցող մթնոլորտը կարևոր է նախ և առաջ հանդիսատեսի համար, ով եկել է երաժշտություն լսելու: Մյուս կողմից՝ լավ է, որ կա հանդիսատես, որի ականջից ոչինչ չի վրիպում:

- Ինչ ապրումներ ու զգացողություններ են առաջնորդում մենակատարին բեմում, ինչպե՞ս են հաղթահարվում բեմական հուզմունքը, վախը:

- Ամեն երաժիշտ իր պատճառը, նույնիսկ պատճառներն ունի բեմում հուզվելու, սկսած մասնագիտականից, վերջացրած՝ հոգեբանականով: Դա չափազանց անհատական պահ է: Պատճառներից մեկն, օրինակ, անպատրաստ լինելն է:

Հոգեբանական պատճառները հաղթահարելն ավելի դժվար է և շատ ավելի անհատական: Յուրաքանչյուր երաժիշտ ինքն է գտնում և լուծում այդ խնդիրը:

Կարծում եմ՝ բեմական վախն ու հուզումքը հաղթահարելու լուծումներից մեկը հաճախակի բեմում լինելն է:

- Ո՞րն է այն կարևորը, որ ունկնդիրը համերգային դահլիճից պետք է իր հետ տանի: Ի՞նչ պետք է երաժիշտը փոխանցի իր հանդիսատեսին:

- Յուրաքանչյուր մարդ յուրովի է ընկալում երաժշտությունը, բայց կարևորը երաժշտությունը ճիշտ փոխանցելն է: Այդ դեպքում դրա մեջ արտահատված զգացմունքները հասանելի կլինեն հանդիսատեսին: Ըստ իս, կատարողի հիմնական

խնդիրը տվյալ գործի բովանդակությունը ունկնդրին փոխանցելն է՝ հնարավորինս բացատրելով տեխնիկական ու անձնային խանգարող հանգամանքները: Կատարողն իր ընկալումներով, իր զգացմունքային դրսևորումներով չպետք է խանգարի լսողին ընկալել գրված երաժշտությունը: Այլապես գործը բավարար տպավորիչ չի լինի:

- Ինչ նմանություն և տարբերություն կա մեր, որը պայմանականորեն անվանենք «սովետական», և դրսի կատարողական դպրոցների, մոտեցումների միջև:

- Գլոբալիզացիայից հետո տարբերություն գրեթե չկա: Տարբերությունը կարող ենք նկատել միայն թերևս «հին դպրոցի» ներկայացուցիչ կատարողների, օրինակ, Հեյֆեցի կամ նրանից առաջ ելած շատ ջութակահարների մոտ:

Նախկինում գործիքային տեխնիկական լուծումները և երաժշտության կատարումը հակադրում էի միմյանց: Հարցն ուսումնասիրելուց հետո համոզված եմ, որ երաժշտական տեքստն է թելադրում կատարման նրբությունները: Եթե ամեն ինչ արվում է գրված տեքստին համապատասխան (եթե այն, իհարկե, ճիշտ ենք հասկանում), ապա ոչ մի հակասություն չի առաջանում, քանի որ այդ դեպքում տեխնիկական և երաժշտական կողմերը համահունչ են լինում: Այս թեման մտադիր եմ ավելի մանրամասն լուսաբանել մոտ ապագայում:

- Արվեստում, ինչպես և կյանքում, կան առաջնային ու երկրորդական բաներ: Երաժշտության մեջ որո՞նք են առաջնայինն ու երկրորդականը:

- Անշուշտ, ամեն ինչը չէ, որ հավասարաչափ կարևոր ու առաջնային է, ընդգծելու, առանձնացնելու կարիք ունի: Շեշտադրումը պետք է հասկանալ երաժշտական յուրաքանչյուր գործի դեպքում առանձին:

- Տարբեր է արդյո՞ք երաժշտությունը երաժշտի և հանդիսատեսի համար:

- Մի տարբերություն կա՝ մենք տեխնիկական խնդիրներ ենք լուծում: Բայց արդյունքում երկուսս էլ երաժշտությունը նույն կերպ ենք լսում: Եվ որքան գրագետ լուծի խնդիրը երաժիշտը, այնքան ճիշտ կհնչի և հեշտ կընկալվի երաժշտությունը:

- Նվագել սկսել եք դեռևս շատ մանուկ հասակից: Ինչ մասնագիտական ճանապարհ եք անցել:

- Ծնողներս էլ են երաժիշտ, և ես երաժշտություն լսել եմ մինչև նվագել սկսելը: Սկզբում սովորել եմ հորս մոտ, ապա՝ Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում՝ Տատյանա Հայրապետյանի մոտ: 14 տարեկանում տեղափոխվել եմ Մոսկվա, սովորել եմ Մայա Գլիզարովայի մոտ, ում մասին վերջերս հետմահու տպագրվել էր «Մտրադ» հանրահայտ ամսագրում: Հայաստանում, մինչև Կանադա մեկնելը, 13 տարի դասավանդել եմ Երևանի

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ մասնագիտական ու կամերային անսամբլի ամբիոններում:

Այդ ընթացքում, նաև Կանադա տեղափոխվելուց հետո, բախտ եմ ունեցել տարբեր տարիքի և տարբեր երկրների կատարող ջութակահարների հետ շփվելու, նրանցից մասնագիտական նրբություններ սովորելու:

- Ինչո՞վ էիք զբաղվում Կանադայում:

- Կանադայում հիմնականում համերգային գործունեություն ունեի: Շատ եմ ճանապարհորդել, համերգային ծրագրերով եղել եմ Մեքսիկայում, Միացյալ Նահանգներում, Մալազիայում, Թայվանում, Ճապոնիայում, Կոլումբիայում, ինչպես նաև Վրաստանում, Ռուսաստանում և Հայաստանում՝ արդեն որպես կանադահայ ջութակահար:

Այդ ընթացքում հանդիպել ու ծանոթացել եմ բարձր դասի բազմաթիվ կատարողների, որոնց հետ ընկերացել եմք:

Տարբեր երկրներում համերգներին զուգահեռ նաև վարպետության դասեր եմ անցկացրել, օրինակ՝ Թայվանում, Մալազիայում, որտեղ շատ խոստումնալից երեխաներ կային:

- Որքան գիտեմ, նաև աշակերտներ ունեք, ունեցել եք ինչպես Հայաստանում, այնպես էլ Կանադայում: Ինչ կապում եք ուսուցանելու գործընթացի մասին:

- Այո: Մինչ օրս ձեռք բերած գիտելիքներս ու դիտարկումներս սիրով փոխանցում եմ չափահաս աշակերտներին: Աշակերտներ եմ ունեցել Միացյալ Նահանգներից, Պարսկաստանից, Կանադայից: Դասավանդելն այնքան էլ հեշտ գործ չէ: Եթե դասավանդողը պարզապես «տեսաբան» է, և ոչ՝ կատարող, ապա չենք կարող ակնկալել, որ դասավանդումն արդյունավետ կլինի:

- Ո՞րն է կարևոր, տաղանդը, թե՞ աշխատասիրությունը:

- Աշխատասիրությունը նույնպես տաղանդ է:

Լիլիթ Ալեքսանյան